Երթամք անիծենք քաղաքն որ լեղակն ի մէջն կու բուսնի.
Պօյաճուն կարասն աւիրի, իւր սիրտըն թող հալի պատռի.
Պօյաճին այլ ի՞նչ անէ, իր տարտերն քանց ձերն աւելի:
Երթամ աղաչեմ զԱստուած որ լեղկան ընտիկն անցանի,
Ո՛չ սպիտակ ծոց լուրջ հագնի, ո՛չ մանկան սիրտըն նըւաղի:

Դ.

Կ՛ասեմ թէ՝ Աղկեկ ես դուն, նա կ՛ասէ թէ Տէրն է տըւեր.
Ասցի թէ՝ Պագիկ մի տո՛ւր, ինքն ասաց՝ Պագըս գին ունի.
Ասցի թէ՝ Պագիդ գին ի՞նչ, նա ասաց՝ Պագիս գին, հոգի՛դ:
–Հոգեկս ալ հոգիդ ուզէ, չէ չասեմ, հանեմ տամ ի քեզ,
Վախեմ թ՛աչերըս ուզես, հապ՝ ինչո՛վ հայիմ դէպ ի քեզ:
Աչեր եօթն ու վեց պիտէր, եօթն ու վեց կամ քառսուն ու վեց.
Մէկովն այլ աշխարհ հայիմ, այլն ամէնն այլ ի դէպ ի քեզ:

Ե.

Երեսդ է սիրով մածուն, պագդ անուշ էր քանց ամենուն.
Բե՛ր պագնեմ լոյս երեսըդ, որ չերթաս գանգտիս քո ներում.
Քո ներդ ալ շատ վարձք արեր ու կապեր կարմունջ գետերուն.
Դուն այլ այդ վարձկունք արա՛, քո մէկիկ աղբօր արեւո՛ւն:

ԵՐԵՍՈՒՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

..... եւ կարմիր խընձորով.
Ով անցաւ՝ տարաւ գոգով, ով ծոցով՝ թող երթայ բարով.
Ես անցայ ու մէկ տարայ. կանչեցին՝ Տարա՛ւ ճըղերով.
Նալա՛թըն աչերուդ վերայ, զիմ թարկիկն է՞ր տըւիր շուտով:

Բ.

Գիշերս ի մօտ յիս արի՛, զիմ օթեւան քեզ ցուցանեմ.
Բանամ զիմ սըրտի կոճակն, ներս մըտնես՝ դառամ խփուցեմ:

Գ.

..... կուռըն մատաշ.
Կուգամ քո դըռնովն անցնիմ ու տանիմ զոտկունքս էլ ի քաշ.
Թող որ պագնեմ զքո երեսն, թող հազար թուր ի քաշ.
Հազար ղարաւուլ ունիս, ես կուգամ կ'ելնեմ քեզ ֆըռաշ.